

գերական 7-դ ժողովը իրաւունք ունէին ամուսնանալու և այդ ոչ ոքի կողմից յանդիմանութեան և դիտողութեան չէր հանդիպում: «Խպիսկոպոսը չը պէտք է պատկռի, և եթէ նրանցից մինը առանց կոչումը վերցնելու պատկռի, նա համարեա Սիրիք աքսոր է գատապարտում:

Պ. պ. Բունկերը և Անդրոսիկին, որոնք կըօնական լիլիսում այսական նիստերի ժամանակ պնդում էին, որ մեզ մօտ ճշշմարտութիւններն անփոփոխ են մնացել և մենք միայն հատիկաներից ցորեն ենք բուսուցանում, որի ժամանակ թէ ցորենից և թէ հատիկաներից ճաշակում էին ամենքը միշտ և հանապազ և գա մեզ անդրդուելի ճշմարտութեան ընորոշ գծերից մէկն է, գուցէ նրանք կցըուեն իմ այս մոլորութիւնս:

Թօզանովի համար այդ հարցը ոչ միայն տեսական, այլ և գործնական կեանքի խնդիրն է հանդիսանում: Աս ասում է հետեւալը.—

Զէ՞ որ անգլիացու ընտանիքի իդէալական տիպարը նրանով է բացատրում, որ նրանց եպիսկոպոսները պատկռած են և աշխարհականները միշտ գործնական օրինակ են վերցնում այդ միշտ աչքի առաջ եղող, և շօշափելի ընտանիքի բարի և առաքինի կողմերից: Եւ այդ օրինակներն աւելի զօրաւոր են, քան բանաւոր և հեռուից արտառանած քարոզը:

Պետքոս առաքեալը պատկռած էր:

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Կաթալիայում գոյութիւն ունեցող կաթոլիքական կազմակերպութիւնը (Azione Cattolica) որից Աւոն XIII պապը մեծ օգուտաներ էր ոպասում հկեղեցու և պապական աթոռի համար, վերջին տարիներու ոկտեց հետևել իւր հոգանաւորի գծած շաւզի հակառակ ուղղութեան: Զըբաւականնալով նրա գծած ծրագրով, գործիւներից շատերը ցանկացան ընթանալ այն ուղղութեամբ, որով առաջնորդում է բանուորական կուսակցութիւնն այլ երկիրներում, և աւելի աղդային կեանքի մասին էին հոգ տառնում, քան պապական աթոռի օգուտաների մասին: Անկավարաների մէջ ահա այդ պատճառով առաջ եկած տարածայնութիւնները հարկադրեցին Պիոս X պապին՝ գահ բարձրանալուն պէս առանձին շրջաբերականով (Motu proprio) յիշեցնել նրանց քրիստոնէական ռամկալարութեան հիմնական սկզբունքները, ինչպէս որ այդ հասկանում էր Աւոն XIII պապը: Բայց որով-

հետև զրանից յետոյ էլ տարածայնութիւնները վերջ չունեցան, ուստի պապը վճռեց դիմել աւելի գործնական միջոցների՝ Մերի—Դէլ—Վալի շրջաբերականով յուլիսի 29 ին յայտարարուեց եպիսկոպոսներին մի շարք կարգադրութիւնների, որոնք արմատականապէս փոփոխում են գործի ամբողջ կաղմակերպութիւնը:

«Մշտական գլխաւոր յանձնաժողովը յայտարարուում է փակուած, փակուած են նաև գլխաւոր մասնախմբերը՝ Opéra dei Congressi իրենց ենթախմբերով, բացի II մասնախմբից, որին և յանձնուած են քրիստոնէական ռամկավարութեան գործերը: Այդ խմբին նախագահ նշանակելու իրաւունքը վերապահուած է եկեղեցական բարձրագոյն իշխանութեան և այդ պաշտօնում հասաւատուած է ներկայ նախագահ կոմս Յունիսիուաւ Միդուազու—Ալբենին, որին և վերապահուած է միւս անդամներին ընտրելու իրաւունքը: Հոգեորականներից թոյլատը ու է անդամ ընդունել միմիայն նրանց, որոնք թոյլատութիւն կըստանան իրենց եպիսկոպոսից: Պապը ցանկութիւն է յայնում, որ թողնուած խմբից հետացուին անմիաբանութեան, անհամայնութեան և կուների սկանառ եղող տարրերը, և ցուցակից հանուին այն բոլոր հոգեորական և աշխարհական անձննք, որոնք յայտնի են քրիստոնէական ռամկավարութեան հակառակ հայեացըներով և տարածում են մետակար նորամուծութիւններ և անկեղծ չեն առաքելական աթուի իրաւանց պաշտպանութեան հարծիների և պապի հրամաններն իրագործելու մէջ: Խոչ վերաբերում է թեմական և վիճակային յանձնաժողովներին ու մասնախմբերին, նրանք միանդամայն ստորագրուած են եպիսկոպոսներին, որոնք և նշանակում են նախագահ և անդամներ և իրաւունք ունին հարկ եղած ժամանակ ցրուել այդ յանձնաժողովներն ու մասնախմբերը: Գլխաւոր համաժողովներն այսուհետեւ կարող են հրաւիրուել միմիայն Ս. Ա.թոռուի թոյլատութեամբ: Իսկ թեմական և վիճակային համաժողովները՝ եպիսկոպոսի կարգագրութեամբ: Ցուղը գործիչներին առաջարկուում է ըստ մոռանաւ, որ «աւելի լաւ է ոչ մի գործ չը շինել» քան եպիսկոպոսի կամքը հակառակ կամ նրանց անկախ բան անել», հետեւապէս պահանջուում է որդիսական հնագանդութեամբ վերաբերուել եպիսկոպոսներին:

Սյու բոլոր կարգագրութիւնները բացատրվում են նրանով, որ առ հայտը (պապը) ցանկանում է՝ աւելի կեանք տալ գործին:

Մեր կարծիքով աւելի հաւանական է, որ մաքրելով դու-

ծիչների կազմը և ստորագրելով՝ իր անց Եկեղեցական Եշխառ-
նութեան, ներկայ վոփոխութիւնը անկախութեան հետ միա-
սին կը լիի քրիստոնէական ու ամկավարութիւնից և այն թոյլ
կեանքը, որ նու հազիւ կարողացաւ ցայտօր երեան հանել:

Այն տարուայ սեպտեմբերի 1—4 (նոր տոմարով) տեղի
ունեցաւ Զուիցերիայի 01թէն քաղաքում հին կաթոլիկների
VI դ միջազդային համաժողովը: Բայց զուիցերական, գերմա-
նական և հոլանդական հին կաթոլիկների ներկայացուցիչներից,
որոնք իրենց գլուխ ունեին Հերցոգ, Գերեր և Գուլ Եպիսկո-
պոսներին, այդ համաժողովին մասնակցեց նուև ամերիկական
հին կաթոլիկների Եպիսկոպոս Կաղղովոկին իւր գլխաւոր փո-
խանորդի հետ միասին, դոքտոր Ջելսը Աւոտրիոյից և Գոլէ վա-
նահայրը Ֆրանսիայից: Խուսաստանից համաժողով Եկաւ հին
կաթոլիկների հին բարեկամ գեներալ Կիրեեր, պրօֆէսոր Կե-
րիսսկի, կոմո Ֆան Տաուրէ և Եակչիչ քահանան. վերջինու մետ-
րապօլիտ Անտոնիոսի և հին կաթոլիկների Խնդրի համար կազ-
մուած յատուկ յանձնաժողովի նախադահ Սերգիի Եպիսկոպոսի
կողմից բարեմադթութիւններ արաւ և հին կաթոլիկների միաց-
ման յոյսը յայտնեց: Անգլիական Եկեղեցու կողմից ներկայացաւ-
ցիչ էր Բրինտ Եպիսկոպոսը Մանչելիայից և տեսուչ Նելինը — Հում-
մից; Կենտրոնական, Խորիկ Եպիսկոպոսները և Ալիսորիւրիի Եպիս-
կոպոսը ու զարկել էին շնորհաւորական հեռագիրներ: Մանսկ-
ցողների թիւը հասնում էր 300ի: Ակզեռում առջի է ունեցել
Եպիսկոպոսական համախորհուրդ: Համապարակական երկու նիո-
տերին կարդացուել է չորս (բէֆէրատ) գաստախոսութիւն: Հա-
մաժողովը բոլորովին չի շօշափել դաւանաբանական խնդիրներ:

Խնչպէս հազորդում է «Altkatholiches Yilksblatt» թիւթը
պրօֆէսոր Ֆրիզերիսը ակնարկի ձգել Եկեղեցական և Եկեղեցա-
կան քաղաքական դէմքերի վրայ սկսած 1892 թուի Լիւցերնի
միջազդային համաժողովից: Միւնխէնի դիտնականի կարծեքով
ժամանակակից քաղաքական դրութիւնը ներկայացնում է քրիո-
տոնէութեան և կաթոլիկութեան հսկայական աղաւաղումն՝ —
յեղաջրջումն: Հուովմը աղաւաղում է քրիստոնէութիւնը նոր
գարդապետութիւններով և համաշխարհապին տիրապետութեան
հաւակնուած ձգտումներով և ուօմանականացած Գերմանիան
իրար հետեւից զիջումներ անելով, կարենը արդելք չի գնում
նրան այդ ուղղութեամբ ընթանալիս: միայն հին կաթոլիկներն
են, որոնք Հուովմի բոնակալութեան առաջ չը խոնարուեցին և

աներկեւղ իլնիթանան նոյն ճանապարհով։ Պրօֆէսոօր Վ. օկերը պատմականօքէն պարզեց հռովմէական եկեղեցու քաղաքակական հիմնարկութեան լիովառէլլ:

Պրօֆէսոօր Տիւրլինգը «կաթոլիկութեան և հռովմէական—կաթոլիկ եկեղեցու» մասին կարդացած գասախօսութեան մէջ ըսղոքում էր կաթոլիկ եկեղեցու ծայրահեղ իրաւաբանական հասկացողութեան դէմ, իբրև քրիստոնեաների համայնքի, որոնք ընդունում են Պապին։ Պրօֆէսոօր Միշօն ծանօթացրեց աստուածաբանական մտքի ծայրահեղ անկման հետ ներկայ ֆրանսիայում և յոյո յայտնեց, որ այդ հանգամանքը օգտակար ընթացք կունենայ հին կաթոլիքական ձգտումների համար։ Վ. Երշին երկու դասախօսութիւնները կը տպագրուին «Միջազգային Աստուածաբանական Տեսութիւն» կոչուող թերթի մէջ։

Հետեւեալ համաստողովը հրաւիրուելու է Յ կամ և տարուց յետոյ՝ Հոլանդիայում։

Միւնխենում յաւնիս ամսին կազմակերպուել է Կրաուս սեան ընկերութիւնը (Kraus Gesellschaft), որը նպատակ է գրել շարունակել և ղարգացնել եկեղեցական պատմաբան հանդուցեալ Փ. Կրաուսի (մթն. 1901թ.) գաղափարները։ Այդ ընկերութեան կազմակերպութեան պատճառ հանդիսացաւ հռովմէական—կաթոլիքական եկեղեցու յառաջադիմական ուղղութիւնը, որով նա ցանկանում է կազմակերպուել և ամրապնդել իւր գոյութիւնը։ Համաձայն Կրաուսի աւանդների ընկերութիւնը ձգտում է հանել լուսաւորեալ կրօնականութեան, կրօնական կեանքում ազգային տարր պահպանելու և դաւանութեանց մէջ խաղաղութիւն հաստատելու նպատակին։ Նա կողմնակից է ազատ հետախուզութեան և վարդապետութեան։ Իւր գաղափարների տարածման համար ընկերութիւնը մտադիր է ունենալ իւր սեփական հանդէս, կազմակերպել հրապարակական գասախօսութիւններ և այլն։

Մինչդեռ Ա. Կ. Խ. XIII պապը կաթոլիկ ոլաւոններին թոյլատը էր ոլաւոնական լեզուով ժամերգութիւնն ու պատարագը, ներկայ Պիոս Խ պապը համաձայն Տիւենտի նագէլ եպիսկոպոսի պահանջների, որը միանգամայն հակառակ է ժողովրդական լեզուով ժամերգութեան, արգելել է ոլաւոններէն ժամերգութիւնը Խորվատիայում, որի պատճառով և մեծ անկարգութիւններ են ծագել և գայթակղութեան տուիթ է գարձել նոյն իսկ հոգեորականներին։

— Այսպէս առհատարակ մարդիկ իրենց ուժեղ զգալով, Աստուծուն էլ հարկադրում են միմիայն մի լեզու դիտենալ և այդ լեզուով լսել ու հասկանալ մորդկանց ազօթքն ու պաշտամբը: Թայց նա հենց այդպէս ազօթողներին և աղօթել տուողներին լսելուց է շուտ ձանձրանում և դադարում: և դորա ապացոյցներ շատ ունինք պատմութեան մէջ:

Հոռվիմում այս տարուայ ունակումբերին տեղի ունեցաւ միջազդային «Ազատ մտքի» համաժողովը: Կաթոլիկ եկեղեցու հակառակութիւնը Ազատ մտքի դէմ անցեալում և ներկայումս, նրա և կուլտուրական տէրութեան մէջ տեղի ունեցող կռիւը Ազատ մտքի ներկայ համաժողովի անդամներին ներշնչեց հակակաթոլիքական ընաւորութիւն: Համաժողովի համար ընտրուած էր Հոռվիմը նրա համար, որ այստեղ՝ հենց Վատիկանի աջքի առաջ հեղինակաւոր ներկայացուցիչներն յայտարարէին, որ մարդուս հոգին իրաւունք ունի ազատ զարգանալու: Համաժողովի բացման համար որոշուած էր սեպտեմբերի 20-ը, որ միացեալ Խոալիայի զօրքերով Հոռվիմ քաղաքը գրաւելու տարեդարձն է, որով և ընկաւ պատի աշխարհային իշխանութիւնը: Երեք հազար անդամներից 1000 հոգուց աւելի Ֆրանսիայից էին եկել եկեղեցու հակառակ տրամադրութեամբ: Աչքի ընկնող դեր էին խաղում և մասօննէրը: Ազատ մտածման սկզբունքները պարզեցին Հէկիելն ու Բերտելոն: Ներկայացուցիչն զեկուցումներ գաւանարան և գիտութեան մասին, ինչպէս և եկեղեցին և պետութիւնն իրարից անջատելու առաջարկը, որով պահանջւում էր ոչնչացնել պատից և եկեղեցուց կախումն ունենալու վերջին մնացորդները:

Հիւբարը, որ պարապում է այս խնդրով, պնդում էր, որ պատր կաթոլիքական համաշխարհային սինդիկատի գլուխն է, որ նրա հրաւիքակներին պէտք է ընդունել մասնաւոր մարդու առաքեալներ, որ պատի հետ համաձայնութեան թղթերը (կոնկուգատնեցն) երբէք միջազդային պայմանագրի նշանակութիւն չունին: Ատենարաններից մի քանիսը հասարակապետութիւնը այնքան կտրուկ կերպով յայտարարեցին իրըև քաղաքական ամենաընտիր կաղմակերպութիւն, որ նուալացի անդամներից մի մասին բողոքելու առիթ տուին:

Յայտնի հակաեկեղեցական ցոյցը կաթոլիկութեան կեղարոնում առանց պատասխանի չմնաց կաթոլիկների կողմէց, կաթոլիկաց թերթերը խօսք չէին գտնում այդ պատմ մտածողների համախմբումն ըստ արժանույն պարսաւելու:

«Osservatore Romano»-ի կարծեքով՝ ՀԵՆց Աղատ մոքի սկըզ-
բունքի մէջ Աստուծոյ գէմ ապստամբուելու ինչ որ սատանա-
յական բան կայ: Յայտաբարելով այդ սկզբունքը Հռոմում,
վերառութանք են հասցնում Եկեղեցական հեղինակութեան և
պատի իշխանութեան: Խաւալիայի զանազան կողմերից կաթո-
լիկները սկսեցին բաղոքել Հռոմի համաժողովի գէմ և վերստին
յայտաբարեցին իրենց հաւատարմութիւնը Հռոմի Եկեղեցուն:

աւագման պահ միջնորդական առողջութեան ուղարկում
ուղարկում առաջնորդական առողջութեան ուղարկում
առաջնորդական առողջութեան ուղարկում առողջութեան
առաջնորդական առողջութեան ուղարկում առողջութեան
առաջնորդական առողջութեան ուղարկում առողջութեան
ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ ԽՆԴԻԲ

Աղքերի կենսունակութեան սաղմը թագնուած է ըն-
տանիքի մէջ. ընտանիքն է այն առաջին դպրոցը, ուր
սննում – դաստիարակում են հասարակութեան ապագայ
պիտանի անդամները, նոյն ընտանիքն է, որտեղ ծնունդ
են առնում ֆիզիքապէս առողջ և հօգեալէս զուարթ ան-
հատներ, դարձեալ ընտանիքն է տալիս հասարակութեան
ֆիզիքապէս, հօգեալէս և մտաւորապէս այլանդակ ան-
հատներ: Այս ճշմարտութիւնը բաղմիցս քարոզուել է խօս-
քով, մամուլի և բազմաթիւ գրքերի միջոցով, սակայն
կեանքը հարկաւոր չափով չի բարելաւուել, կատարեալ
դասնալուց շատ հեռու է և այդ նրա համար, որ մէկ
կողմից ժողովուրդը չի հասել զարգացման այն կատարե-
լութեան, որ ըմբռնի այդ ճշմարտութիւնը և անկարող է
իր մէջ արմատացած սովորութիւնները, նախապաշարում-
ները վերացնել, խոկ միւս կողմից այն հաստատութիւն-
ները, որոնք հնարաւորութիւն ունէին օգտակար, ժո-
ղովրդի բարօրութեան ծառայող գտղափարները գոր-
ծադրել տալ, կամ անփոյթ են գտնուել, կամ անհնարին
համարելով՝ յուսահատաբար ձեռք են թափ տուել ու բա-
ւականացել միայն պլատոնական կարեկցութիւն արտա-
յայտելով:

Մեր հասարակական կեանքի մէջ կան արմատացած